

63. ԾԻՏԿԸՑՈՂ ՄԱՐԴՈՒ ՀԵՔԻԱԹ

Ճիտուն ըսեր ին.

— Օր գելնաս տանիք, չորի՞ն վըր մեկ չոտաց կը կանխս:
Հսեր է.

— Օր տուն չը փլի:

Հշտե իգա ճիտու պես մարդ մե՛ չուր նստեր-կաներ՝ ուրին կը դովնր. «Ես հմալ մեկն իմ, օր մարդ իմ պառեկ գետին չը դնե, իս թն չը կոնա օլրե, թե կոիվ էղնի՛ քառսուն մարդու պատասխան կիտամ»:

Օր մե ըդրա կնիկ կըսե.

— Քա մա՛րդ, իմ չոտ ու գլուխ ե՞ր կը թաժացուս: Քանի մե փարա իմ քոմի, չելի գէդ փարեն առ, գնա քաղաք, շոր-մոր դնե, հազնիմ, օր մը լե ես խնդանամ:

— Վըր իմ աչիչ, կնի՛կ, էրթամ, հըտյեռին առնիմ բերիմ:

Մարդ գելսա, օր էրթա քաղաք: Ճամպեն մեշի միջով գընցներ, հըտ ուր մտքին կէրթեր չառեշ, մեկ լե ծառի տակից ավազակ մե դուրս կը թոնա:

— Կա՛նի,— կը բռռա,— ի՞նչ մարդ իս:

Մարդու լեզուն կը լալկի, քիչ մնա լեղին պատռի, կը դողա իմալ լապստրակ: Ավազակ ըդրա չոտից գլուխ կիշկե, զփարի քիսըք կառնե, քանիմ՝ գամփոց գիջու գլխուն, կը հլոնդե, մարդ թե էրկու չոտք ուներ, էրկուս լե փոխ կառնե, անշախ ուրին կը թալե տուն:

— Յա՛, էդ ի՞նչ շուտ դառձար, բերի՞ր,— կը հարցու կնիկ:

— Տո՛, էլ մը հա՛րցու, օղլաթ էկավ գլուխսի. մեշով չառեշ կէրթենք, քառսուն ավազակ չառշեսի կտրին, հմալ կոիվ մե փրթալ մեր մեշ, օր շուրի չըսօր լէղի, գեռսուն ին սպանի, մնաց մեկ, էն լե պտի սպանենք, ձեռքես պրծավ փախավ: էդի հե՞չ, ջա՛նըմ, կովի

տաք վախտ քու տված փարեն քիսըքով շընկնա՝ կորի, դաշի՛, դաշի՛, չը կոցա գտնենք, թողի քետ դառնա:

Կնիկ կը կատղի, կը հռըփա դըխ մարդ:

— Քու պատանք կարիմ տաս տակ թելով, էլման կը ճիտկընա՛ս, տո՛ վախկոտ, դու վի՛ն կը խարիս:

Կնիկ, դու կնիկ, կը քաշե զկաղնի վարոց, գընկնա մարդու ջան, աղեկ մե կը ծեծե, լանգեմ՝ կը զարկե մեջքին, դուս կէնե, ղդուտ կը փակե, կը նստի՝ հեռսից ու սրտի կծկծուց զիլա ու կանիծե:

Շան պես ծեծ կերած էդ մարդ՝ չը խաւտվի, կէրթա կանի գեղի մեյդան, մարդիկ կը քոմե գլխուն, կը ճիտկընա, ուր կովի պատմութեն կէնե, հմա մեկ լե շավտընա, կը ծիծղա, էս քանկըքով կառնե, մեկել քանկըքով դուս կիտա:

